# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց, թիվ 48, Հեռ. 060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 ՀՈՒԼԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 141**

## <<ԴԱՄԱԼԱ ՖՈՒԴ>> ՍՊԸ-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 50-Ն որոշման պահանջներով , ինչպես նաև հիմք ընդունելով <<Դամալա Ֆուդ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝**որոշում եմ.**

1. <<Դամալա Ֆուդ>> ՍՊԸ -ին տրամադրել համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացման թույլտվություն՝ 2019 թվականի հուլիսի 22-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 19թ. հուլիսի22
գ.Վերին Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
**23 ՀՈՒԼԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 142**

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի պահանջը, ինչպես նաև Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 10-ի թիվ 34-Ա որոշման պահանջը, **որոշում եմ**

Փոփոխել համայնքային սեփականություն հանդիսացող / կադաստրային ծածկագիր 07-062-0022-0004/ 0.01936 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության <<հասարակական կառուցապատման գործառնական նշանակության>>:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 19 թ.հուլիսի 23
գ.Վերին Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,Հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## 23 ՀՈՒԼԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 143

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով,Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 10-ի թիվ 37-Ա որոշման պահանջներով հիմք ընդունելով ընդլայնվող հողամասի սեփականատիրոջ դիմումը և հարևան հողամասերի սեփականատերերի համաձայնությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 07-062-0105-0047 կադաստրային ծածկագրով 0.00859 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի եղանակով օտարել հարակից՝ ընդլայնվող 07-062-0105-0047 կադաստրային ծածկագրով 0.00859 հա հողամասի սեփականատեր Սուսաննա Դրաստամատի Խաչատրյանին 388612 /երեք հարյուր ութսունութ հազար վեց հարյուր տասներկու / ՀՀ դրամ արժեքով:

2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված վճարը 30-օրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի հողի օտարման 900105231170 հաշվեհամարին չփոխանցելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2019 թ.հուլիսի 23
գ.Վերին Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ
### 26 ՀՈՒԼԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 144

### << ԱՎԱՄ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, ինչպես նաև << Ավամ Գրուպ>> ՍՊԸ-ի տնօրեն Վ. Ասրյանի դիմումը ՝ **որոշում եմ**

1. <<Ավամ Գրուպ>> ՍՊԸ-ին տալ իրեն պատկանող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողատեսքում պահեստի, օժանդակ շինության պահակակետի և քարե պարիսպի կառուցման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն :

2. Հանձնարարել <<Ավամ Գրուպ>> ՍՊԸ-ին շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:

3. Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 19 թ.հուլիսի 26
գ.Վերին Պտղնի